

նուց. ինքը իր անձին համար կը պատմէ թէ Երուսաղէմի տնօրինականաց ուխտի երթալու ժամանակ, Կարին քաղաքին մէջ կը հանդիպի Հեթում Բ. թագաւորին սեպհական Սասունաւաշունչ գրքին՝ որուն մէջ կը գրէ թէ ինքը թագաւորն «իւրով հոմերական տողիւ չափաբանութեամբ շարամանեալ ունէր գանուեր նախնեացն. մինչև ցինքն, գեղեցիկ յօրինուածովք»։ Պատմիչ Զաքարիա սրկ. ի համաձայն, Վաղարշապատեցին վախճանած է 1659ին: Զաքարիայի միակ երկասիրութիւնն է պատմական ընդարձակ յիշատակարան մը, որուն մէջ կը համառօտէ Մովսէս կթղ. ին, անոր աշակերտաց ու հայրապետական աթոռին վրայ իրեն յաջորդող՝ Փիլիպպոս և Յակոբ կաթողիկոսներու վարքը: (Պսմ. Հայ. Գար. Բ. 131—32):

ԶԱՔԱՐԻԱ ՔՀ. ԼԵՀԱՅԻ. — Գրիգոր Պարոնտէր պարք. ի ժամանակ 1637 ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ նոյն ատեն իրեն յիշատակ ընդօրինակել կուտայ Ճառընձիր մը, որուն յիշատակարանը այս է. «... յիշեցէք ի Գրիստոս զմեծափափաք ստացաւզ սորա զտէր Զաքարիա. Լովա աւագերէցն. որդի տէր Գասպար աւագերիցուն, որ ետ գրել զայս սուրբ տառս մեծաւ տենչմամբ և եռանդասէր սրտիւ. որ հանդիպեցաւ սորին աւրինակի՝ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. ի դուռն սուրբ Յակոբա առաքելոյն. և ետ աւրինակել յիշատակ և նախնեաց իւրոց: . . Գրեցաւ թվ. ՌՁՁ (= 1637) Փետր. ԻԸ. յԵրուսաղէմ սուրբ քաղաքն. ի դուռն Ս. Յակոբա»: «... ողորմեա... և ինձ մեղապարտ գրչիս Մկրտիչիս՝ Ղազարի որդւոյն և ծնաւդաց իմոց. գրեցաւ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ թվ. ՌՁՁ. Յունվար Ը.» (արգս. Յուց. հատ. Բ. 113—114): Զաքարիա բարերար և առաքինի քահանայ մը եղած է. կը վախճանի 1652 ին: (Կաննից կջ 112):

ԶԱՔԱՐԻԱ ՔՀ. ՇԱՄԱԽԵՑԻ. — 1765 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը:

ԶԱՔԱՐԻԱ ՔՀ. — 1716 ին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը եւ Ս. Յարութեան տաճարին մէջ նոյն թրւականին կ'ընդօրինակէ Ժողովածոյ գիրք մը, որ կը գտնուի այժմ բրիտ. ձեռագիրներու թանգարանին մէջ և ունի հետեւեալ յիշատարարանը. «Այս գրքուկս թվին ՌՃԿԵ (= 1716) յԵրու-